Գեղարվեստի ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի նիստում – թերթ, «Կրթություն», Ե, 20.03.2019

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում տեղի ունեցավ ՀԳՊԱ-ի հոգաբարձուների խորհրդի նիստը: Ըստ «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի՝ նիստը սկզբում նախագահեց խորհրդի ամենատարեց անդամը՝ ՀԳՊԱ-ի արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի պրոֆեսոր Աշոտ Գրիգորյանը:

Հոգաբարձուների խորհրդի կողմից նիստի օրակարգը հաստատելուց հետո Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի կերպարվեստի ֆակուլտետի գեղանկարի և գծանկարի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Փարավոն Միրզոյանը խորհրդի նախագահի պաշտոնում առաջարկեց Հայաստանի նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանի թեկնածությունը: Վերջինս միաձայն ընտրվեց ՀԳՊԱ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ: Այնուհետև հոգաբարձուների խորհրդի քարտուղարի պաշտոնում առաջադրվեց ՀԳՊԱ-ի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մկրտիչ Այվազյանը: Նա ևս ընտրվեց միաձայն:

Օրակարգային չորրորդ հարցի շրջանակում ՀԳՊԱ-ի ռեկտոր Արամ Իսաբեկյանը ներկայացրեց «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի 2018 թվականի գործունեության հաշվետվությունը, որը հոգաբարձուների խորհրդի միաձայն հավանությանն արժանացավ: Նիստի ընթացքում հաստատվեցին նաև 2019 ֆինանսական տարվա ՀԳՊԱ-ի եկամուտների և ծախսերի նախահաշիվը և ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրությունը: